

Հարցաշար
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
11–12-րդ դասարաններ - 120 րոպե

№ 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Հիսուսի աշակերտներից ո՞վ էր մաքսավոր. (0,5 միավոր)**
1) Սողոմոնը 2) Թովմասը 3) Հակոբոսը 4) Մատթեոսը
2. **Ո՞ր կաթողիկոսի օրոք է Տյառնը նդառաջը հաստատվել իբրև նորապսակների և նորակազմ ընտանիքների օրհնության օր. (0,5 միավոր)**
1) Ներսես Գ. Տայեցի 2) Վազգեն Ա. 3) Բարսեղ Բ. Անեցի 4) Գարեգին Բ.
3. **Հասան-Ջալալյանները Հայոց եկեղեցու նվիրապետական ո՞ր աթոռի ներկայացուցիչներն են. (0,5 միավոր)**
1) Սսի կաթողիկոսություն 2) Աղթամարի կաթողիկոսություն
3) Աղվանից կաթողիկոսություն 4) Երուսաղեմի պատրիարքություն
4. **Նազարեթում ապրող Հովսեփն ի՞նչ էր արհեստով էր զբաղվում. (0,5 միավոր)**
1) Հյուսն 2) Փականագործ 3) Որմնադիր 4) Մանածագործ
5. **Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը տարածվեց նաև Վրաստանում, Աղվանքում և որտե՞ղ. (0,5 միավոր)**
1) Ասորիքում 2) Ատրպատականում 3) Հնդկաստանում 4) Չինաստանում
6. **Ե՞րբ է ՀՀ գինված ուժերում հիմնադրվել հոգևոր ծառայությունը. (0,5 միավոր)**
1) 1992 թ. 2) 1994 թ. 3) 1998 թ. 4) 2006 թ.
7. **Ստորև թվարկված վանքերից ո՞րն է գտնվել Վայոց Ձորում: (0,5 միավոր)**
1) Օհանավանք 2) Հաղպատ 3) Նորավանք 4) Գոշավանք
8. **Ե՞րբ է Նիկոլայ 1-ը հաստատել Հայոց եկեղեցու կանոնադրությունը՝ «Պոլոժենիեն» (0,5 միավոր)**
1) 1888 թ. 2) 1836 թ. 3) 1890 թ. 4) 1861 թ.

№ 9-12
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. **Ըստ ավանդության՝ Արարատից իջնելիս Նոյը տեսավ ջրերից ցամաքած առաջին տարածությունը և բացականչեց _____ (1 միավոր):**

10. -----ը գրել է. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:
(1 միավոր):

11. ----- գրել է. «Մի բան է իմանալ բարին, մի այլ բան՝ բարիք գործելը»:
(1 միավոր):

12. Ամեն տարի ----- ամիսներին Հայոց Եկեղեցին տոնում է հիմնադիր առաքյալների տոնը:
(1 միավոր):

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքների

13. *Խաչքարի քիվի վրա պատկերված չորս խորհրդանիշներին համապատասխանեցնել չորս ավետարանիչների հետ.*
(1 միավոր)

- 1) հրեշտակ
- 2) առյուծ
- 3) եգ
- 4) արծիվ

1	
2	
3	
4	

- ա) Մատթեոս
- բ) Ղուկաս
- գ) Մարկոս
- դ) Հովհաննես

14. *Յեղիևակի անունը համապատասխանեցնել աշխատության վերնագրին.*
(1 միավոր)

- 1. Դավիթ Անհաղթ
- 2. Մովսես Բաղրամյան
- 3. Եզնիկ Կողբացի
- 4. Ագաթանգեղոս
- 5. Կորյուն
- 6. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»
- բ) «Իմաստասիրության սահմանում»
- գ) «Ազգապատում»
- դ) «Ս. Գրիգորի վարքը»
- ե) «Եղծ աղանդոց»
- զ) «Վարք Մաշտոցի»
- է) «Սուրբ Կաթողիկեի ողբը»

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Դուք ինքներդ գիտեք Չայոց աշխարհի քաջությունը և ամեն մեկի անվեհերությունը. գուցե պարտություն կրելով՝ կենդանի-կենդանի գրկվեք այն մեծ կյանքից որ ունենալու եք Յիշեցեք ձեր կանանց և որդիներին հիշեցեք ձեր սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինեք...»

Ո՞վ է, ըստ պատմիչի, մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

16. «Այսօր մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տևի, ոչ մի դեպքում ընկրկում, նահանջ, թուլացում մենք մեզ չենք կարող թուլատրել: Դա դավաճանություն է Աստծուն, դավաճանություն է հայրենիքին»:

Ո՞վ է այս խոսքերի հեղինակը: (1 միավոր)

17. « ...Մեր ազգը թե՛ Չայաստանում, թե՛ Արցախում մարտնչում է հանուն կյանքի հաղթության: Այնպես է, որ հինավուրց հայ ազգը մի անգամ ևս պատմության բեմի վրա հանդես է գալիս հպարտ ճակատով, որպես վավերական քրիստոնյա ժողովուրդ»:

1. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը: (1 միավոր)

2. Ո՞ր թվականներին են ասվել այս խոսքերը. (1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Չայոց եկեղեցու ստորև թվարկված խորհուրդներից ո՞ր երկուսն են սխալ. (2 x 1 = 2 միավոր)

- 1) Ս. Դրոշմ:
- 2) Ս. Խնկարկություն:
- 3) Տնօրհներ:
- 4) Ս. Մկրտություն:
- 5) Ապաշխարություն:
- 6) Ձեռնադրություն:

**19. Ներկայացված կաթոռիկոսներից ովքեր են գահակալել 17-րդ դարում:
(1 x 2 = 2 միավոր)**

- 1) Ս. Մովսես Գ. Տաթևացի
- 2) Կիրակոս Վիրապեցի
- 3) Խաչիկ Բ. Անեցի
- 4) Սարգիս Ա. Սևանցի
- 5) Հակոբ Դ. Ջուղայեցի
- 6) Ներսես Ե. Աշտարակեցի
- 7) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
- 8) Հովհաննես Ը. Կարբեցի

№ 20

Շարադրանք (2 միավոր)

20. Ներկայացրե՛ք հայրենիքը որպես հիմնարար արժեք և հայ տեսակի պահպանման ու հարատևման գրավական: